ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ
ԵՎ ՄԵՏԱԼՈՒՐԳԻԱՅԻ
ԱՍՈՑԻԱՑԻԱ

АССОЦИАЦИЯ ГОРНО-
МЕТАЛЛУРГИЧЕСКИХ
ПРЕДПРИЯТИЙ АРМЕНИИ

ARMENIAN MINING AND METALLURGY ASSOCIATION

ՀՀ, ք. Երևան, Արգիշտի 7 Argishti St 7, Yerevan, RA РА, г. Ереван, ул.Аргишти 7
Tel.(+374)12 702 702, (+374)94490346: E-mail: info@miningmetal.am; www.armhanq.com

Երևան

12.11.2025թ.

ՀՀ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐ,
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ԳԵՎՈՐԳ ՊԱՊՈՅԱՆԻՆ

Հարգելի պարոն նախարար.

ՀՀ էկոնոմիկայի նախարարին կից հասարակական խորհրդի կազմում ներգրավվելու նպատակով Ձեզ ենք ներկայացնում «Հայաստանի հանքարդյունաբերության և մետալուրգիայի ասոցիացիա» ՀԿ-ի (այսուհետ՝ Ասոցիացիա) հայտը:

Ասոցիացիան հանդիսանում է հանքարդյունաբերության և մետալուրգիայի ոլորտի իրավաբանական անձանց հասարակական միավորում և գործունեություն է ծավալում ՀՀ ողջ տարածքում: Ասոցիացիան իրականացնում է ներդրումային, ռազմավարական և տնտեսական խորհրդատվություն, ոլորտի կայուն զարգացման, որոլտին առնչվող համայնքային և բնապահպանական քաղաքականությունների մշակում, մասնագիտական կրթության, կոնֆերանսների և փորձագիտական հարթակների կազմակերպում և այլն: Ասոցիացիան իր գործունեությունն իրականացնում է Երևան, Արգիշտի 7 հասցեում, կայքը՝ https://armhanq.com/:

Ասոցիացիայի կազմում ընդգրկված են, ինչպես հանքարդյունաբերության ոլորտի խոշոր կազմակերպություններ՝ օր. «Զանգեզուրի ՊՄԿ» ՓԲԸ, «Ագարակի ՊՄԿ» ՓԲԸ, «Ախթալայի ԼՀԿ» ՓԲԸ, «Կապանի ԼՀԿ» ՓԲԸ, «Թեղուտ» ՓԲԸ և այլ, այնպես էլ մետալուրգիական մի շարք կազմակերպություններ՝ օր. «Ասկե Գրուպ» ԲԲԸ, «Հեքսագոն» ՍՊԸ, «Ռոսալ Արմենիա» ՓԲԸ, «Զուլակենտրոն» ՓԲԸ և այլն:

Հայտին կից ներկայացնում ենք՝

1. Ասոցիացիայի պետական գրանցման վկայականի պատճենը,
2. Ասոցիացիայի կանոնադրության պատճենը
3. Հասարակական խորհրդի աշխատանքներին կմասնակցի Ասոցիացիայի նախագահ՝ Վարդան Ջհանյանը (ՆՔՀ՝016407165 տրված 014-ի կողմից _03.08.2024թ. , հեռ.044 259 801, էլ. փոստ՝ vardan.jhanyan@zcmc.am):

Կից ներկայացնում ենք սույն թվականի հոկտեմբեր ամսին Ասոցիացիայի և ՀՀ էկոնոմիկայի նախարարության միջև ստորագրված Համագործակցության հուշագրի պատճենը:

ՏՆՕՐԵՆ՝ Վ. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

ՀՀ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺԻՆ
«12» 11 2025 թ.
Մուտքագրման № 0748407

THE MINISTRY OF ECONOMY OF THE REPUBLIC OF ARMENIA

ARMENIAN MINING AND METALLURGY ASSOCIATION

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

ՀՀ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԵՎ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԵՏԱԼՈՒՐԳԻԱՅԻ ԱՍՈՑԻԱՑԻԱ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ
ՄԻՋԵՎ

ՀՀ, Երևան « 3 » 10 2025թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարությունը (այսուհետ՝ Նախարարություն), ի դեմս նախարար Գևորգ Պապոյանի, մի կողմից, և

«Հայաստանի հանքարդյունաբերության և մետալուրգիայի ասոցիացիա» հասարակական կազմակերպությունը (այսուհետ՝ Ասոցիացիա), ի դեմս նախագահ Վարդան Ջհանյանի, մյուս կողմից, այսուհետ հիշատակելիս՝ Կողմեր, առանձին՝ Կողմ,

Հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության տնտեսության մեջ հանքագործության և մետալուրգիական ոլորտների կարևորությունը,

Կարևորելով հանքագործության և մետալուրգիական ոլորտների շարունակական և կայուն զարգացման, ինչպես նաև սույն ոլորտներին առնչվող իրավական կարգավորումների մշակման կամ հստակեցման անհրաժեշտությունը և միջազգային չափանիշներին համապատասխանության նպատակը,

Առաջնորդվելով Հայաստանի Հանրապետությունում տնտեսական գործունեության ազատության, ազատ տնտեսական մրցակցության և երկրում ընդհանուր տնտեսական բարեկեցության անհրաժեշտությամբ,

Ղեկավարվելով պետության քաղաքականության հիմնական նպատակներով՝ ուղղված գործարար միջավայրի բարելավմանը և ձեռնարկատիրության խթանմանը, բնակչության զբաղվածության խթանմանը և աշխատանքի պայմանների բարելավմանը, հանքագործության և մետալուրգիայի խթանմանը և

տվյալ ոլորտներին առնչվող ՀՀ օրենսդրության պահանջներով ամրագրված այլ նպատակներով,

Կնքեցին մտադրությունների մասին սույն երկկողմ համագործակցության հուշագիրը (այսուհետ՝ Հուշագիր) և համաձայնեցին Հուշագրի շրջանակներում սեփական կարողությունների, գործառույթների, հնարավորությունների սահմաններում իրականացնել հետևյալ գործառույթները:

ՀՈԴՎԱԾ 1
ՀՈՒՇԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

1. Կողմերը միավորում են համատեղ ջանքերը հետևյալ նպատակներով՝

1.1. Կողմերը նախատեսում են Հայաստանի Հանրապետության օրենսդրության շրջանակներում համագործակցել միմյանց հետ՝ ուղղված հանքարդյունաբերության և մետալուրգիական ոլորտների շարունակական կայունացմանը և զարգացմանը՝ իրենց վերապահված լիազորությունների, գործառույթների, հնարավորությունների, միջոցների և փորձի կիրառմամբ,

1.2. Հուշագրի գործողության իրականացման ընթացքում Կողմերն իրենց իրավասությունների շրջանակներում նպատակ ունեն համագործակցել օրենսդրական նախաձեռնությունների մշակման և աջակցման գործընթացում, հանդես գալ օրենսդրական նախաձեռնություններով, մշակել անհրաժեշտ իրավական ակտեր, ձեռնարկել համապատասխան քայլեր՝ ուղղված հանքարդյունաբերության և մետալուրգիայի ոլորտների հետագա և շարունակական զարգացմանը:

1.3. Ամրապնդել և խորացնել Նախարարության և Ասոցիացիայի համագործակցությունը Հայաստանի հանքարդյունաբերության և մետալուրգիական ոլորտների զարգացմանն ուղղված օրենսդրական նախաձեռնությունների համատեղ քննարկումների և հանրային (պետություն) և մասնավոր համագործակցության միջոցով.

1.4. Աջակցել ներդրումային միջավայրի բարելավմանը.

1.5. Նպաստել երկրի տնտեսության հանքարդյունաբերական միջավայրի զարգացմանը, ինչպես նաև՝ հանքարդյունաբերության ոլորտի առջև ծագած խնդիրների փոխընդունելի լուծումների մշակմանը:

ՀՈԴՎԱԾ 2

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՁԵՎԵՐԸ

2.1. Նախարարությունն իրեն վերապահված լիազորությունների շրջանակներում պատրաստակամ է աջակցելու հանքարդյունաբերության և մետալուրգիական ոլորտների հետագա կայունացմանը և զարգացմանը, ոլորտային խոչընդոտների հաղթահարմանը, վերաբերելի օրենսդրության շարունակական բարելավմանը,

2.2. Նախարարությունը, կարևորելով Ասոցիացիայի, նրա անդամների կողմից իրականացվող գործունեությունը, պատրաստակամ է իրեն վերապահված լիազորությունների շրջանակներում աջակցելու Ասոցիացիայի գործունեության արդյունավետության բարձրացմանը,

2.3. Ասոցիացիան, իր առաքելության շրջանակներում պատրաստակամ է աջակցելու հանքարդյունաբերության և մետալուրգիական ոլորտներին, ինչպես նաև ոլորտների ընկերությունների գործունեության ընթացքում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջների լավագույն և լիարժեք կիրառմանն ուղղված նախաձեռնությունների իրագործմանը, ինչպես նաև՝ նպաստելու հարակից ոլորտների հետ համագործակցությանը,

2.4. Նախարարությունը հանքարդյունաբերության և մետալուրգիական ոլորտներում մշակվող իրավական ակտերի, ինչպես նաև հանքարդյունաբերության և մետալուրգիական ոլորտներին առնչվող իրավական ակտերում նախատեսվող փոփոխությունների և լրացումների վերաբերյալ նախագծերը տրամադրում է Ասոցիացիային՝ դիրքորոշման,

2.5. Ասոցիացիան իրականացնում է հանքարդյունաբերության և մետալուրգիական ոլորտների խնդիրների վերաբերյալ վերլուծություններ և արդյունքների վերաբերյալ տեղեկատվությունը տրամադրում Նախարարությանը,

2.6. Նախարարությունն իրեն վերապահված լիազորությունների շրջանակներում պատրաստակամ է աջակցելու Ասոցիացիային՝ միջազգային հարթակներում հանքարդյունաբերության և մետալուրգիական ոլորտների կազմակերպվող միջազգային ցուցահանդեսներին Հայաստանի Հանրապետության գործարարների մասնակցության տեսանկյունից:

ՀՈԴՎԱԾ 3
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

3.1. Հուշագրի իրագործման նպատակով Կողմերը համաձայնում են պարբերաբար կազմակերպել թեմատիկ կլոր սեղաններ, աշխատանքային քննարկումներ, օրենսդրական բազայի կատարելագործմանը և կիրառմանն ուղղված միջոցառումներ՝ Կողմերի մասնագետների վերապատրաստումներ, ինչպես նաև իրազեկման և ուսուցողական նպատակներ հետապնդող այլ միջոցառումներ:

3.2. Կողմերը համաձայնում են ձեռնարկել անհրաժեշտ բոլոր միջոցները Հուշագրով ամրագրված համագործակցությունը պատշաճ, բարեխղճորեն, Կողմերի միջև համաձայնեցված ժամկետներում և ՀՀ օրենսդրության շրջանակներում կատարելու համար:

3.3. Հուշագրի շրջանակում հանքարդյունաբերության և մետալուրգիական ոլորտներին առնչվող հարցերի լուծումն իրականացվում է Կողմերի միջև մշակված, կազմված փաստաթղթերի (պայմանագրերի, համաձայնագրերի, լրացուցիչ համաձայնագրերի և այլնի) միջոցով, որոնք կապահովեն իրենց առջև դրված նպատակների իրագործումը,

3.4. Կողմերը ընդունում են և համաձայնվում են, որ Հուշագիրը Կողմերի համար չի ստեղծում և չունի պարտադիր իրավաբանական ուժ և, որ Հուշագրով Կողմերից յուրաքանչյուրը որևէ պատասխանատվություն չի կրի մյուս Կողմի հանդեպ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 445-րդ հոդվածի 7-րդ մասի իմաստով:

3.5. Հուշագիրը Կողմերի համար ֆինանսական պարտավորություններ չի առաջացնում:

ՀՈԴՎԱԾ 4
ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆԸ

4.1. Հուշագրի շրջանակներում չի իրականացվում գաղտնի տեղեկատվության փոխանակում, կամ փոխանակում այնպիսի տեղեկատվությամբ, որը արգելված է փոխանակել Կողմերի ստանձնած պարտավորությունների համաձայն: Եթե

անհրաժեշտություն է առաջանում սահմանափակ տեղեկատվության փոխանակման համար, ներառյալ առևտրային գաղտնիք, ապա Կողմերը պետք է կնքեն համապատասխան Հուշագիր նման տեղեկատվության չտարածման մասին:

ՀՈԴՎԱԾ 5
ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

5.1. Հուշագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի կողմից ստորագրման օրվանից և գործում է անժամկետ,

5.2. Հուշագրի գործողությունը կարող է դադարեցվել Կողմերից յուրաքանչյուրի՝ այդպիսի մտադրության մասին մյուս Կողմին գրավոր ծանուցելու օրվանից տասն օր հետո,

5.3. Կողմերի միջև փոխադարձ համաձայնությամբ Հուշագրում կարող են կատարվել փոփոխություններ և լրացումներ, որոնք կամրագրվեն առանձին համաձայնագրերի կնքմամբ և ուժի մեջ կմտնեն Կողմերի կողմից ստորագրելու օրվանից և կհանդիսանան Հուշագրի բաղկացուցիչ մասը, ստորագրելու օրվանից:

5.4. Հուշագիրը կազմված է հայերենով, բաղկացած է 5 (հինգ) էջից, 2 (երկու) բնօրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ և յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական բնօրինակ:

ԿՈՂՄԵՐԻ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՀՀ էկոնոմիկայի նախարարություն
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան,
Մհեր Մկրտչյան 5
ՀՎՀՀ՝ 02698604

ստորագրություն

Նախարար՝ Գևորգ Պապոյան

«Հայաստանի
հանքարդյունաբերության և
մետալուրգիայի ասոցիացիա» Հ/Կ
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Արգիշտի 7
ՀՎՀՀ՝ 00862257

ստորագրություն

Նախագահ՝ Վարդան Ջհանյան,

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐ

ՊԵՏԱԿԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆԻՑ ՔԱՂՎԱԾՔ առ 2025-07-07

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԵՏԱԼՈՒՐԳԻԱՅԻ ԱՍՈՑԻԱՑԻԱ»

Հասարակական կազմակերպություն (ՀԿ)

Գրանցման համար	**211.171.1009236**
Հիմնադրման տարի	**2018**
Գրանցման ամսաթիվ	**2018-03-12**
Գործունեության ժամկետ	**Անժամկետ**
Կարգավիճակ	**Իրավաբանական անձի լուծարման գործընթացում գտնվելու կամ գործունեության (գոյության) դադարման մասին պետական միասնական գրանցամատյանում տեղեկություններ գրառված չեն:**
Իրավաբանական անձի ծածկագիր (ՁԿԴ)	**39208308**
Հարկ վճարողի հաշվառման համար (ՀՎՀՀ)	**00862257**
Սոցիալական վճարների պարտավորությունների անձնական հաշվի քարտի համար (Ապահովադրի ծածկագիր)	**177236**
Էլ. փոստ	**info@miningmetal.am**
Կայք	**armhanq.com**

Գտնվելու վայրը

Հասցե	**ԱՐՏԱՇԻՍՅԱՆ Փ. / S / 10 ՇԵՆԳԱՎԻԹ 0039 ԵՐԵՎԱՆ ԵՐԵՎԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ**
Հեռախոս	**+374 10 462229**

Գործադիր մարմնի ղեկավար

Անուն Ազգանուն	**ՎՈԼՈԴ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ ՀԱՅԿԻ**
Անձնագրային տվյալներ	**AU0359277 2021-07-19 003**
Հասցե	**ԱՐՏԱՇԻՍՅԱՆ Փ. / S / 10 ՇԵՆԳԱՎԻԹ 0039 ԵՐԵՎԱՆ ԵՐԵՎԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ**

Տեղեկություններ իրավահաջորդության / իրավանախորդության վերաբերյալ

Իրավահաջորդ(ներ) **գրառված չեն**

Իրավանախորդ(ներ) **«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՔԱԳՈՐԾՆԵՐԻ ԵՎ ՄԵՏԱԼՈՒՐԳՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ» ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՄԻՈՒԹՅՈՒՆ ԻԱՄ (282.150.05651)**

Պետական միասնական գրանցամատյանում կատարված փոփոխություններ

Գրանցման ամսաթիվ	Փոփոխություններ
2022-09-15	**Գործադիր մարմնի ղեկավարի տվյալների փոփոխություն**
2023-02-13	**Իրական սեփականատերերի վերաբերյալ նոր խմբագրությամբ հայտարարագրի ընդունում**
2023-04-07	**Պաշտոնական կայքի և/կամ էլ.փոստի մասին տվյալների փոփոխություն** **Կանոնադրության փոփոխություն (նոր խմբագրությամբ կանոնադրություն)**
2024-01-26	**Իրական սեփականատերերի վերաբերյալ նոր խմբագրությամբ հայտարարագրի ընդունում**
2024-02-27	**Պաշտոնական կայքի և/կամ էլ.փոստի մասին տեղեկությունների գրառում**
2025-02-13	**Իրական սեփականատերերի վերաբերյալ նոր խմբագրությամբ հայտարարագրի ընդունում**
2025-07-07	**Անվանման փոփոխություն** **Կանոնադրության փոփոխություն (նոր խմբագրությամբ կանոնադրություն)**

Քաղվածքը տրամադրող՝ _____ **Աննա Մանուչարյան**

Քաղվածքի տրամադրման ամսաթիվ **07-07-2025**

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԿՆԻՔ

Կազմված է
29 . 05 . 2025թ.

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՔԱԳՈՐԾՆԵՐԻ ԵՎ ՄԵՏԱԼՈՒՐԳՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ
«29» ՄԱՅԻՍԻ 2025թ.
ԱՐՏԱՀԵՐԹ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ

ՏՆՕՐԵՆ՝

ՎՈԼՈԴ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

(ստորագրություն) (անուն, ազգանուն)

ՏՊԱԳՐՎԱԾ Է ԸՆԴԱՄԵՆԸ 2 ՕՐԻՆԱԿ
ՕՐԻՆԱԿ 1

ԳՐԱՆՑՎԱԾ Է

ՀՀ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ
«07» 04 2023 թ.
ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ 211,171,1009236
ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՀԱՄԱՐ

00862257

« 07 » 04 2023 թ.

ԳՐԱՆՑՎԱԾ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԹԻՎ

001.2 ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

ԳՐԱՆՑՎԱԾ Է
ՀՀ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ
«07» 07 2025թ.

ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԵՏԱԼՈՒՐԳԻԱՅԻ ԱՍՈՑԻԱՑԻԱ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

(նոր խմբագրություն)

2025

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. **«Հայաստանի հանքարդյունաբերության և մետալուրգիայի ասոցիացիա» հասարակական կազմակերպություն** (այսուհետ՝ Կազմակերպություն) իրավաբանական անձանց և (կամ) Հայաստանի Հանրապետության քաղաքացիների, օտարերկրյա պետությունների քաղաքացիների, քաղաքացիություն չունեցող անձանց (այսուհետ՝ ֆիզիկական անձ) հասարակական միավորում է, որն ունի ոչ առևտրային կազմակերպության կարգավիճակ:

1.2. Կազմակերպությունը հանդիսանում է «Հայաստանի հանքագործների և մետալուրգների միություն» իրավաբանական անձանց միության (գրանցման համար՝ 282.150.05651, գրանցման ամսաթիվ՝ 01.12.2006թ., ՀՎՀՀ 00862257) գույքի, իրավունքների և պարտատերերին և պարտապաններին վերաբերող պարտավորությունների իրավահաջորդը:

1.3. Կազմակերպությունը գործում է ՀՀ օրենսդրության, ՀՀ միջազգային պայմանագրերի և սույն կանոնադրության հիման վրա:

1.4. Կազմակերպության գործունեության սկզբունքներն են օրինականությունը, խտրականության բացառումը, բարեխղճությունը, անդամության կամավորությունը, անդամների շահերի ընդհանրությունը, ինքնակառավարումը և հաշվետվողականությունը:

1.5. Կազմակերպությունը գործում է ՀՀ ողջ տարածքում և օտարերկրյա պետություններում՝ այդ պետությունների օրենսդրությանը համապատասխան:

1.6. Կազամակերպությունը չունի անդամության սահմանափակում:

1.7. Կազամակերպությունը գործում է առանց ժամկետի սահմանափակման (անժամկետ):

1.8. Կազմակերպության անվանումն է՝

Հայերեն՝ **«Հայաստանի հանքարդյունաբերության և մետալուրգիայի ասոցիացիա» հասարակական կազմակերպություն**

Ռուսերեն՝ **«Ассоциация горно-металлургических предприятий Армении»** общественная организация

Անգլերեն՝ **«Armenian Mining and Metallurgy Association»** public organization:

1.9. Կազմակերպությունը ունի առանձնացված գույք, ինքնուրույն հաշվեկշիռ, իր անվանմամբ կլոր կնիք՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով և Կազմակերպության դրոշմ և տիտղոսաթերթեր:

1.10. Կազմակերպության գտնվելու վայրն է՝ՀՀ, Երևան, Արտաշիսյան փողոց, տուն՝10 հեռ.010 462 229, 060 700 705, էլ. հասցեն՝ info@miningmetal.am:

2. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

2.1. Կազմակերպության գործունեության առարկան .

2.1.1. սատար կանգնել հանքագործների և մետալուրգների մասնագիտական և հեղինակային իրավունքների պաշտպանությանը.

2.1.2. ստեղծել հանքարդյունաբերության տեղեկատվական կենտրոն:

2.2. Կազմակերպության նպատակներն են.

2.2.1. նպաստել ոլորտի զարգացմանն ուղղված պետական քաղաքականության բարեփոխմանը՝ միջազգային չափանիշներին համապատասխանեցնելու և իրագործելու գործընթացին,

2.2.2. նպաստել ներդրումային միջավայրի բարելավմանը, հատկապես՝ ֆիսկալ ռեժիմի (արդարացի հարկային վճարների), օգտակար հանածոների պաշարների հետազոտման և գնահատման՝ միջազգային ստանդարտների պահանջներին

համապատասխանեցնելու գործընթացին, ինչը թույլ կտա բարձրացնել ներդրումների ներգրավումը, ոլորտի ծրագրերի իրագործելիության ռիսկայնության նվազեցմանը, ինչպես նաև ոլորտի ձեռնարկությունների տեխնիկատեխնոլոգիական հագեցվածության արդիականացմանը,

2.2.3. ընդլայնել համագործակցությունը կրթական համակարգի, մասնավորապես բուհերի համապատասխան ֆակուլտետների և հանքարդյունահանող ընկերությունների, ասոցիացիաների, միջազգային կազմակերպությունների հետ,

2.2.4. ծառացած խնդիրների լուծման հարցում ձևավորել հանքարդյունաբերության ոլորտի օրենսդրական կարգավորումների միասնական մոտեցումներ,

2.2.5. նպաստել ոլորտում գործող կազմակերությունների գործունեության (տնտեսական, բնապահպանական և սոցիալական ասպեկտներում), շահագրգիռ կողմերի օրենսդրությամբ սահմանված իրավունքների և պարտականությունների վերաբերյալ հանրության իրազեկվածության բարձրացմանը՝

ա. հանրությանը ներկայացնել հանքարդյունաբերության դերն ու նշանակությունը երկրի տնտեսական զարգացման գործում. այդ նպատակի իրականացման համար հիմնել սեփական լրատվամիջոց (էլեկտրոնային, տպագիր)

բ. Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության (ԱՃԹՆ) բազմաշահառու խմբի (ԲՇԽ) անդամների միջոցով իրազեկվածության գործընթացը դարձնել ԱՃԹՆ-ի գործընթացի անբաժանելի մաս,

2.2.6. կազմակերպել օրենսդրական յուրաքանչյուր փոփոխության մասով հանրային քննարկումներ՝ Կազմակերպության անդամների մասնակցությամբ,

2.2.7. նպաստել ոլորտին առնչվող (շրջակա միջավայրի, տեխնիկական անվտանգության և այլն) օրենսդրական և նորմատիվամեթոդական դաշտի միջազգային նորմերին համապատասխանեցման գործընթացներին,

2.2.8. ակտիվացնել պետական կառավարման մարմինների հետ շփումները՝ ոլորտում առկա խնդիրներին փոխընդունելի լուծումներ գտնելու համար, մասնավորապես՝ ոլորտը կարգավորող օրենսդրության բացերի (չհստակեցված, հակասական, կոռուպցիոն ռիսկեր կրող, միջազգային նորմերին չհամապատասխանող դրույթներ, չկարգավորված խնդիրներ և այլն) վերհանում և դրանց վերացմանը միտված Կազմակերպության անդամների առաջարկությունների հիման վրա ձևավորված դիրքորոշումների ներկայացում:

3.ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆՆ ԱՆԴԱՄԱԳՐՎԵԼՈՒ ԵՎ ԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆԻՑ ԴՈՒՐՍ ԳԱԼՈՒ ԿԱՐԳԸ

3.1. Կազմակերպության անդամ կարող է դառնալ 18 տարին լրացած ցանկացած ֆիզիկական անձ, ինչպես նաև Կազմակերպության անդամ դառնալու իրավունք ունեցող իրավաբանական անձ, որը ընդունում է կազմակերպության կանոնադրությունը, ցանկանում է մասնակցել նրա գործունեությանը և մուծում է անդամավճար: Կազմակերպության անդամների ընդունելիության և նրա կազմից դուրս գալու կարգը սահմանում է կազմակերպության խորհուրդը :

3.2. Կազմակերպության հիմնադիրները Կազմակերպության պետական գրանցումից հետո օրենքի ուժով համարվում են Կազմակերպության անդամներ:

3.3. Կազմակեպության մեջ ընդունվելու հարցը լուծում է Կազմակերպության Խորհուրդը (այսուհետ՝ Խորհուրդ): Կազմակերպության անդամ դառնալու համար անձը գրավոր դիմում է Խորհրդին, դիմումին կից ներկայացնելով իր իրավասու մարմնի որոշումը:

3.4. Անդամակցության դիմումը մերժելու դեպքում Խորհրդի կողմից դիմումատուին ուղարկվում է գրավոր պատճառաբանված մերժում:

3.5. Կազմակեպությանն անդամագրված անձը կարող է ցանկացած ժամանակ դուրս գալ Կազմակերպությունից՝ այդ մասին գրավոր դիմում ներկայացնելով Խորհրդին, իրաբանական անձի դեպքում՝ կից ներկայացնելով իրավասու մարմնի որոշումը:

3.6. Կազմակերպության այն անդամը, որը պարբերաբար խախտում է սույն կանոնադրության դրույթները կամ չի կատարում Կազմակերպության ղեկավար մարմինների պարտադիր կատարման ենթակա որոշումները՝ Խորհրդի որոշմամբ հեռացվում է անդամությունից: Վերստին նրա անդամագրումը կատարվում է ընդհանուր հիմունքներով:

4. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

4.1. Կազմակերպության յուրաքանչյուր անդամ ունի մեկ ձայնի իրավունք:

4.2. Կազմակերպության ցանկացած անդամ իրավունք ունի՝

4.2.1. ընտրել և ընտրվել Կազմակերպության կառավարման մարմիններում,

4.2.2. ներկա գտնվել Ընդհանուր Ժողովին անձամբ կամ Խորհրդի նիստին,

4.2. 3. ցանկացած դեպքում անվճար օգտվել Կազմակերպության ծառայություններից,

4.2.4. ծանոթանալ Կազմակերպության մարմինների արձանագրություններին, ստանալ նրանց ընդունած որոշումների պատճենները,

4.2.5. վերադասության կամ դատական կարգով բողոքարկել Կազմակերպության մարմինների որոշումները: Կազմակերպության անդամի կողմից գործադիր մարմնի որոշումների բողոքարկումն իրականացվում է Ժողովին համապատասխան դիմում ներկայացնելու եղանակով: Դիմումը քննարկում է Ժողովը: Դիմումի քննարկումը կարող է կատարվել նաև հեռակա կարգով,

4.2.6. Կազմակերպությունից պահանջել տեղեկություններ, ստանալ փաստաթղթերի պատճեններ՝ Կազմակերպության կանոնադրության փոփոխությունների, Կազմակերպության մարմինների արձանագրությունների, որոշումների, գույքի կառավարումից ստացված դրամական միջոցների վերաբերյալ, ինչպես նաև ստանալ նրա ֆինանսական հաշվետվությունների աուդիտն իրականացրած անկախ աուդիտորի եզրակացության պատճենը, որոնք վերաբերում են վերջին 3 տարիներին,

4.2.7. մասնակցել Կազմակերպության գործունեության հիմնական փաստաթղթերի մշակմանը,

4.2.8. մասնակցել Ասոցիացիայի կողմից անցկացվող միջոցառումներին,

4.2.9. ներկայացնել առաջարկություններ և դիտողություններ Ասոցիացիայի աշխատանքների վերաբերյալ,

4.2.10. անարգել դուրս գալ Կազմակերպությունից,

4.2.11. իրականացնել «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքով սահմանված այլ իրավունքներ:

4.3. Կազմակերպության անդամը պարտավոր է՝

4.3.1. հոգ տանել Կազմակերպության հեղինակության մասին,

4.3.2. կատարել Կազմակերպության կանոնադրական պահանջները և կառավարման մարմինների որոշումները,

4.3.3. բարեխղճորեն կատարել կառավարման մարմինների որոշմամբ իր վրա դրված պարտականությունները,

4.3.4 ժամանակին կատարել անդամության և նպատակային վճարումները:

5. ԿԱԶԱՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

5.1. Կազմակերպությունն իր կանոնադրությամբ նախատեսված նպատակներն իրականացնելու համար օրենքով սահմանված կարգով իրավունք ունի՝

5.1.1. իր անունից ձեռք բերել և իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվող կամ պատասխանող,

5.1.2. բացելու բանկային հաշիվներ Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետությունների բանկերում՝ Հայաստանի Հանրապետության և (կամ) արտարժույթով,

5.1.3 ստեղծել այլ կազմակերպություն կամ լինել նրան մասնակից,

5.1.4. ստեղծել առանձնացված ստորաբաժանումներ կամ հիմնարկներ,

5.1.5. տեղեկատվություն տարածել իր գործունեության մասին,

5.1.6. կազմակերպել և անցկացնել խաղաղ, առանց զենքի հավաքներ,

5.1.7. օրենքով սահմանված կարգով ներկայացնել ու պաշտպանել իր անդամների և կամավորների իրավունքներն ու օրինական շահերը այլ կազմակերպություններում, դատարանում, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում,

5.1.8. համագործակցել այլ կազմակերպությունների, այդ թվում՝ միջազգային կամ օտարերկրյա կազմակերպությունների հետ, ինչպես նաև համակարգված գործունեություն ծավալելու, ընդհանուր շահեր ներկայացնելու և պաշտպանելու նպատակով այդ կազմակերպությունների հետ ստեղծել Կազմակերպություն կամ անդամակցել նրանց ստեղծած Կազմակերպությանը՝ պահպանելով իր ինքնուրույնությունը և իրավաբանական անձի կարգավիճակը,

5.1.9. սույն կանոնադրությամբ սահմանված նպատակին համապատասխան իրականացնել ձեռնարկատիրական գործունեություն, այդ նպատակով տնօրինել իր գույքը և գործունեության արդյունքները, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով ստեղծել առևտրային կազմակերպություն կամ դառնալ նրա մասնակիցը,

5.1.10. կատարել օրենքով չարգելված այլ գործողություն:

5.2. Կազմակերպությունը կարող է իր նպատակներին համապատասխան՝ իր աշխատանքներում ներգրավել կամավորների: Կազմակերպության կողմից կամավորներ ներգրավելու իրավահարաբերությունների նկատմամբ կիրառվում են «Բարեգործության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը և Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգիրքը այնքանով, որքանով այդ կարգավորումները չեն հակասում սույն օրենքին: Եթե կամավորի աշխատանքի տևողությունը գերազանցում է շաբաթական 20 ժամը, ապա Կազմակերպությունը կամավորների հետ կնքում է կամավոր աշխատանքի մասին պայմանագիր:

6. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

6.1 Կազմակերպությունը պարտավոր է՝

6.1.1. վարել իր անդամների և կամավորների հաշվառումը,

6.1.2. օրենքով սահմանված կարգով պետական մարմիններ ներկայացրած իր տարեկան ֆինանսական հաշվետվությունները ոչ ուշ, քան հաջորդող տարվա ապրիլի 20-ը հանրային միջոցներից ֆինանսավորման մասով Կազմակերպության Ընդհանուր Ժողովի ընտրած անկախ աուդիտորի կողմից ենթարկել պարտադիր աուդիտի՝ եթե Կազմակերպությունը հաշվետու տարվա ընթացքում հանրային միջոցներից ֆինանսավորվել է 10 միլիոն և ավելի Հայաստանի Հանրապետության դրամի չափով,

6.1.3. պաշտոնական կայքի առկայության դեպքում հասցեի վերաբերյալ ծանուցել ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությանը,

6.1.4. օրենքի պահանջների կատարումը ստուգելու համար Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի պատճառաբանված պահանջով ողջամիտ ժամկետում նրան տրամադրել իր կառավարման մարմինների որոշումների պատճենները կամ գործունեության մասին փաստաթղթեր,

6.1.5. Կազմակերպության անդամի պահանջով ոչ ավելի, քան պահանջի ստացման օրվանից հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում, նրան հնարավորություն տալ ծանոթանալ Կազմակերպության կանոնադրությանը, հիմնադիր այլ փաստաթղթերի, Ընդհանուր Ժողովի որոշումներին կամ տրամադրել դիմողին թղթային կամ էլեկտրոնային եղանակով՝ պահանջի ստացման օրվանից հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում (այդ տեղեկությունները, փաստաթղթերը տրամադրելու համար կարող է գանձվել վճար, որը չի կարող գերազանցել դրանք տրամադրելու համար կատարված ծախսերը),

6.1.6. Կազմակերպության կանոնադրության փոփոխությունների, ինչպես նաև վերակազմակերպման կամ լուծարման դեպքերում՝ օրենքով սահմանված կարգով դիմել ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալություն,

6.1.7. իր գործունեության և գույքի օգտագործման տարեկան հաշվետվությունները ներկայացնել Կազմակերպության Նախագահի հաստատմանը՝ ապահովելով այդ հաշվետվությունների հրապարակայնությունը,

6.1.8. յուրաքանչյուր տարի՝ մինչև հաշվետու տարվա հաջորդող մայիսի 30-ը, կազմակերպությունների կողմից հրապարակվող հաշվետվությունների համար նախատեսված կայքում հրապարակել օրենքով նախատեսված հաշվետվությունը՝ եթե Կազմակերպության գույքի ստացման աղբյուր են հանդիսացել հանրային միջոցները (պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների և այլ հանրային միջոցներ տնօրինող մարմնի կամ իրավաբանական անձի),

6.1.9. վարել ձեռնարկատիրական գործունեության առանձնացված հաշվառում՝ դրա վերաբերյալ տեղեկությունները ներառելով օրենքով նախատեսված հաշվետվություններում: Ասոցիացիայի կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության արդյունքում ստացված շահույթը օգտագործվում է միայն կազմակերպության կանոնադրական նպատակների ուղղությամբ,

6.1.10. կատարել օրենքով սահմանված այլ պարտականություններ:

6.2. Կազմակերպության մարմինները նրա անունից հանդես գալիս պետք է գործեն բարեխղճորեն և ողջամտորեն՝ ի շահ Կազմակերպության:

7. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

7.1. Կազմակերպության գույքի ձևավորման աղբյուր կարող են լինել՝

7.1.1. Կազմակերպության անդամների ներդրումները,

7.1.2. Կազմակերպության անդամների վճարումները (անդամավճարները),

7.1.3. ձեռնարկատիրական գործունեությունից ստացված միջոցները,

7.1.4. իր ստեղծած կամ իր մասնակցությամբ այլ առևտրային կազմակերպությունից ստացված միջոցները,

7.1.5. դրամական մուտքերը պետական բյուջեից,

7.1.6. նվիրաբերությունները, այդ թվում՝ դրամաշնորհները,

7.1.7. հանգանակությունները,

7.1.8. օրենքով չարգելված այլ միջոցներ:

7.2 Կազմակերպության հիմնադիրների և անդամների՝ սեփականության իրավունքով Կազմակերպությանը հանձնած, ինչպես նաև այլ աղբյուրներից ստացված գույքը Կազմակերպության սեփականությունն է:

7.3. Կազմակերպությունն իրեն պատկանող գույքը տիրապետում, օգտագործում և տնօրինում է իր կանոնադրությամբ սահմանված նպատակի իրականացման համար ու այդ նպատակներին համապատասխան՝ օրենքով և իր կանոնադրությամբ սահմանված կարգով:

7.4. Կազմակերպության հիմնադիրները և անդամները Կազմակերպությանը որպես սեփականություն հանձնած գույքի (ներառյալ՝ անդամավճարները) նկատմամբ իրավունքներ չունեն: Նրանք պատասխանատու չեն Կազմակերպության պարտավորությունների, իսկ Կազմակերպությունը՝ իր հիմնադիրների և անդամների պարտավորությունների համար:

7.5. Կազմակերպության գույքը չի կարող բաշխվել նրա հիմնադիրների և անդամների միջև:

7.6. Կազմակերպության հաշվապահական հաշվառումը և վիճակագրությունը վարվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

8. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ԵՎ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՄԱՐՄԻՆԸ

8.1. Կազմակերպության կառավարման բարձրագույն մարմինը Կազմակերպության Ընդհանուր ժողովն է:

8.2. Կազամկերպության այլ կոլեգիալ կառավարման մարմինը Կազամկերպության Խորհուրդն է:

8.3. Կազամկերպության կառավարման մարմինը Կազամկերպության նախագահն է, որը ի պաշտոնե Կազամկերպության Խորհուրդի նախագահն է:

8.3. Կազմակերպության Գործադիր մարմինը Տնօրենն է:

8.4. Կազմակերպությունն առանց լիազորագրի ներկայացնող անձը Կազմակերպության տնօրենն է:

8.5. Կազմակերպության վերստուգող մարմինը Կազմակերպության Վերստուգիչ հանձնաժողովն (Վերստուգողն) է:

Կազմակերպության Ընդհանուր ժողովը

8.6. Կազմակերպության գործունեության և կառավարման ցանկացած հարցի վերջնական լուծման իրավունքը պատկանում է Կազմակերպության բարձրագույն մարմնին՝ Ընդհանուր ժողովին: Կազմակերպության Ընդհանուր ժողովը կարող է լինել հերթական կամ արտահերթ:

8.7. Ընդհանուր ժողովը հրավիրվում է հինգ տարին մեկ անգամ՝ Նախագահի կողմից՝ անդամների համատեղ հավաքի ձևով կամ հեռակա կարգով հեռահաղորդակցության միջոցների օգտագործմամբ՝ կազմելով համապատասխան արձանագրություն կամ փոխանակելով փաստաթղթեր, որոնք հնարավորություն են տալիս ճշգրիտ որոշել, որ փաստաթուղթը ելնում է նրանում որպես հեղինակ նշված անձից: Ընդհանոր ժողովի օրակարգի, նրա աշխատանքի ժամանակի և վայրի մասին մասնակիցները պետք է ծանուցվեն պատվիրված նամակով կամ Խորհրդի կողմից որոշված այլ եղանակով՝ ոչ ուշ, քան Ընդհանուր ժողովի անցկացման օրվանից հինգ օր առաջ՝ հավաստելով հասցեատիրոջ կողմից ծանուցումը ստանալու փաստը:

8. Կազմակերպության արտահերթ Ընդհանուր ժողով հրավիրվում է Կազմակերպության անդամների առնվազն մեկ երրորդի, Խորհրդի, Նախագահի, Գործադիր տնօրենի կամ Վերստուգիչ հանձնաժողովի (Վերստուգողի) նախաձեռնությամբ՝ Նախագահի կողմից՝ պահանջվող կողմի հաստատած օրակարգով, նախաձեռնությունից ոչ ուշ, քան հինգ օրվա ընթացքում հերթական Ընդհանուր ժողով հրավիրելու համար սույն կանոնադրությամբ սահմանված կարգով: Արտահերթ Ընդհանուր ժողով գումարելու ժամանակի և վայրի մասին Ընդհանուր ժողովի մասնակիցները ծանուցվում են ոչ ուշ, քան արտահերթ Ընդհանուր ժողով անցկացնելու օրվանից հինգ օր առաջ:

8.9. Կազմակերպության արտահերթ ժողովը գումարվում է վերոնշյալ նախաձեռնությունից ոչ ուշ, քան 5 օրվա ընթացքում: Արտահերթ ժողով գումարելու ժամանակի և վայրի մասին ժողովի մասնակիցները ծանուցվում են արտահերթ Ժողով անցկացնելու օրվանից առնվազն 5 օր առաջ:

8.10. Կազմակերպության Ժողովի բացառիկ իրավասությունն է՝

8.10.1. հաստատել Կազմակերպության կանոնադրությունը նրանում փոփոխությունների և լրացումների կատարումը, ինչպես նաև նոր խմբագրությամբ կանոնադրության հաստատումը,

8.10.2. ստեղծումը այլ իրավաբանական անձ, այլ կազմակերպությունում Կազմակերպության մասնակցության մասին որոշումների ընդունումը,

8.10.3. հաստատել Կազմակերպության կառուցվածքը,

8.10.4. հաստատել Կազմակերպության անդամների կողմից մուտքի վճարի և անդամավճարների մուծման կարգը, չափերը և ձևերը,

8.10.5. հաստատել Կազմակերպության գործունեության և գույքի օգտագործման հաշվետվությունները,

8.10.6. ընտրել հինգ տարի ժամկետով Կազմակերպության նախագահ, Կազմակերպության Խորհրդի և վերստուգիչ հանձնաժողովի կազմ, կատարել դրանց կազմի փոփոխումը կամ լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը:

8.10.7. որոշել Կազմակերպության Խորհրդի և վերստուգիչ հանձնաժողովի թվաքանակը

8.10.8. սահմանել Նախագահի, Գործադիր տնօրենի և (կամ) տնօրենների վարձատրության կարգը և պայմանները,

8.10.9. ընտրել Կազմակերպության աուդիտն իրականացնող անձին (աուդիտորին), եթե Կազմակերպությունը հաշվետու տարվա ընթացքում հանրային միջոցներից ֆինանսավորվել է 10 միլիոն և ավելի Հայաստանի Հանրապետության դրամի չափով և օրենքով սահմանված կարգով պետական մարմիններ ներկայացրած իր տարեկան ֆինանսական հաշվետվությունները ոչ ուշ, քան հաջորդող տարվա ապրիլի 20-ը հանրային միջոցներից ֆինանսավորման մասով պետք է ենթարկվի պարտադիր աուդիտի,

8.10.10. հաստատել Կազմակերպության ռազմավարությունը,

8.10.11. հաստատել առնվազն հինգ տարին մեկ Գործադիր մարմնի կողմից Ընդհանուր Ժողովի գումարմանը նախորդող տարիների ընթացքում հաստատված Կազմակերպության գործունեության և գույքի օգտագործման տարեկան հաշվետվությունները, Կազմակերպության հաշվապահական հաշվառման և Կազմակերպության կառավարման և այլ մարմինների կողմից ներկայացված հաշվետվությունները (Կազմակերպության գործունեության և գույքի օգտագործման տարեկան հաշվետվությունները Ընդհանուր ժողովի հաստատման են ներկայացվում Վերստուգիչ հանձնաժողովի (Վերստուգողի) եզրակացության հետ միասին),

8.10.12. դադարեցնել Կազամկերպության մարմինների՝ իրավական ակտերի պահանջներին և կանոնադրությանը հակասող որոշումների գործողությունը,

.10.13. ընդունել որոշում Կազմակերպության վերակազմակերպման մասին, գույքի փոխանցման ակտի կամ բաժանիչ հաշվեկշռի հաստատումը, բացի դատարանի վճռով լուծարումից,

8.10.14. ընդունել որոշում Կազմակերպության լուծարման մասին, բացառությամբ դատարանի վճռով լուծարման դեպքերի,

8.10.15. իրականացնել օրենքով կամ Կազմակերպության կանոնադրությամբ նախատեսված այլ լիազորություններ:

8.11. Ընդհանուր ժողովը անցկացվում է սույն կանոնադրությամբ սահմանված կարգով՝

8.11.1. մինչև ընդհանուր ժողովի բացումը կատարվում է անդամների կամ նրանց պատվիրակների գրանցում: Գրանցումը կազմակերպում է Ընդհանուր ժողովի նախագահը,

8.11.2. Ընդհանուր ժողովը բացվում է ծանուցման մեջ նշված ժամին կամ այդ պահին գրանցված անդամների ձայների մեծամասնությամբ ընդունված որոշմամբ՝ ավելի ուշ,

8.11.3. Ընդհանուր ժողովը որոշումներ է ընդունում՝ Կազմակերպության բոլոր անդամների ձայների պարզ մեծամասնությամբ, եթե մասնակցել են Կազմակերպության բոլոր անդամների կամ բոլոր պատվիրակների կեսից ավելին,

8.11.4. Ընդհանուր ժողովի որոշումներն ընդունվում են անդամների կամ նրանց պատվիրակների-ներկայացուցիչների բաց կամ փակ (գաղտնի) քվեարկությամբ: Քվեարկության ընթացքում յուրաքանչյուր անդամ կամ նրա ներկայացուցիչ ունի մեկ ձայնի իրավունք:

8.11.5. Եթե ժողովում քննարկվում է Ընդհանուր ժողովի որևէ մասնակցի կամ նրա հետ փոխկապակցված անձի (ծնող, ամուսին, զավակ, եղբայր, քույր, ամուսնու ծնող, զավակ, եղբայր և քույր) գույքային կամ այլ շահերի վերաբերյալ հարց, ապա Ընդհանուր ժողովի տվյալ մասնակիցը քվեարկությանը չի մասնակցում,

8.11.6. օրակարգում ընդգրկված հարցերի քննարկման ժամանակ իրականացվող քվեարկության կարգը սահմանում է Ընդհանուր ժողովը,

8.11.7. Ընդհանուր ժողովի ընդունած որոշումները գրանցվում են արձանագրության տեսքով, որը վարում է Ընդհանուր ժողովի կողմից ընտրված քարտուղարը:

Կազմակերպության Խորհուրդը

8.12. Խորհուրդը ընտրվում է Ընդհանուր ժողովի կողմից՝ հինգ տարի ժամկետով:

8.13. Խորհուրդը իր աշխատանքներն իրականացնում է նիստերի ձևով, որոնք հրավիրվում են Խորհուրդի նախագահի (կազմակերպության նախագահի) կողմից ոչ ուշ, քան տարին մեկ անգամ: Խորհրդի նիստ կարող է հրավիրվել նաև Կազմակերպության անդամների 20%-ի, Խորհրդի երկու անդամի, գործադիր տնօրենի կամ Կազմակերպության Վերստուգիչ հանձնաժողովի (Վերստուգողի) պահանջով: Խորհրդի նիստը իրավազոր է, եթե նիստին մասնակցում են Խորհրդի անդամների առնվազն 1/2-ը:

8.14. Խորհուրդը՝

8.14.1. Խորհրդի որոշումներն ընդունվում են բաց քվեարկությամբ՝ ձայների պարզ մեծամասնությամբ: Ձայների հավասարության դեպքում Ասոցիացիայի նախագահի ձայնը համարվում է որոշիչ: Անհրաժեշտության դեպքերում Ասոցիացիայի նախագահի որոշմամբ Խորհրդի իրավասությանը վերաբերող ցանկացած հարց կարող է քվեարկվել հարցման միջոցով: Այդ դեպքում որոշումն ընդունում է խորհրդի ընդհանուր թվի պարզ մեծամասնությամբ,

4.2. Խորհուրդը Խորհրդի անդամի խորհրդի կազմից կամ Ասոցիացիայից դուրս գալու դիմումի, պարտականությունների կատարման անհնարինության և սույն կանոնադրությամբ սահմանված այլ դեպքերում որոշում է կայացնում նրանց Խորհրդի կազմից հանելու մասին: Նման դեպքերում Խորհրդի քվորումը հաշվարկվում է Խորհրդի փաստացի անդամների թվաքանակից,

8.14.3. որոշում է ընդունում Ընդհանուր Ժողով հրավիրելու մասին: Անհրաժեշտության դեպքում սահմանում է Ընդհանուր ժողովի պատվիրակների ընտրության կարգը և ներկայացուցչական չափորոշիչները,

8.14.4. առաջարկություններ է ներկայացնում Ընդհանուր ժողովին՝ նրա բացառիկ իրավասություններին վերաբերող հարցերի վերաբերյալ,

8.14.5. սահմանում է Կազմակերպության անդամների ընդունելիության և նրա կազմից դուրս գալու կարգը ,

8.14.6. հաստատում է Խորհրդի աշխատակարգերը,

8.14.7. իրավասու է ընդունել Կազմակերպության անդամ և հեռացնել Կազմակերպության անդամությունից,

8.14.8. Կազմակերպության անդամների նկատմամբ կիրառում է խրախուսանքի և տույժի միջոցներ,

8.14.9. ղեկավարում է Կազմակերպության գործունեությունը՝ Ընդհանուր ժողովների միջև ընկած ժամանակահատվածում,

8.14.10. Ընդհանուր ժողովին առաջարկություններ է ներկայացնում Կազմակերպության անդամների կողմից մուտքի վճարի և անդամավճարների մուծման կարգի, չափերի և ձևերի մասին,

8.14.11. որոշումներ է ընդունում Կազմակերպության առանձնացված ստորաբաժանումներ կամ հիմնարկներ ստեղծելու և դրանց կանոնադրությունները հաստատելու մասին,

8.14.12. որոշումներ է ընդունում Կազմակերպության անդամների կողմից Կազմակերպության ծառայություններից անվճար օգտվելու մասին,

8.14.13. Նախագահի հրաժարականի կամ նրա կողմից իր պարտականությունների կատարման անհնարինության դեպքում յոթ օրվա ընթացքում անցկացնում է Խորհրդի նիստ՝ Կազմակերպության Ժողով հրավիրելու մասին օրակարգով: Խորհրդի այդ նիստը հրավիրում և ղեկավարում է տարիքով ավագ Խորհրդի անդամը,

8.14.14. վերստուգիչ հանձնաժողովի առաջարկությամբ քննարկում է ֆինանսատնտեսական գործունեության ընթացիկ ուսումնասիրման արդյունքները,

8.14.15. իրականացնում է օրենքով և կանոնադրությամբ նախատեսված այլ անհրաժեշտ գործողություններ

8. 14. 16. հաստատում է Կազմակերպության հաստիքացուցակը և տարեկան ծախսերի նախահաշիվը :

Կազմակերպության Խորհրդի Նախագահը

8.16. Խորհրդի Նախագահը ի պաշտոնե Կազմակերպության նախագահն է:

Կազմակերպության Նախագահը

8.17. Կազմակերպության Նախագահը կանոնադրությանը և Ընդհանուր ժողովի որոշումներին համապատասխան՝

8.17.1. ապահովում է Ընդհանուր ժողովի որոշումների կատարումը,

8.17.2. Խորհրդի հետ միասին մշակում է Կազմակերպության ռազմավարությունը և ներկայացնում է Ընդհանուր ժողովի հաստատմանը,

8.17.3. հաստատում է կազմակերպության տարեկան ծրագիրը,

17.4. ներկայացնում է Կազմակերպությունը Հայաստանի Հանրապետությունում և օտարերկրյա պետություններում,

8.17.5. իր նախաձեռնությամբ կամ Կազմակերպության անդամների առնվազն մեկ երրորդի, Տնօրենի, Վերստուգիչ հանձնաժողովի (Վերստուգողի) պահանջով հրավիրում է Ընդհանուր ժողովներ, գումարում է Խորհրդի նիստեր,

8.18.6. հաստատում է Ընդհանուր ժողովի գումարմանը նախորդող տարիների Կազմակերպության գործունեության և գույքի օգտագործման տարեկան հաշվետվությունները, որոնք հինգ տարին մեկ անգամ ներկայացվում են Ժողովի հաստատմանը,

8.17.7. իր իրավասության սահմաններում արձակում է հանձնարարականներ, կատարման համար տալիս է պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը,

8.17.8. Կազմակերպության անդամների շահերի պաշտպանության, Կազմակերպության գործունեության բարելավման վերաբերյալ առաջարկությունները և հայտարարությունները ներկայացնում է ՀՀ օրենսդիր և գործադիր իշխանության, տեղական ինքնակառավարման մարմիններում,

8.17.9. իրականացնում է օրենքով և սույն կանոնադրությամբ իրեն վերապահված այլ լիազորություններ,

8.17.10. իրականացնում է Ժողովի և Խորհրդի որոշումներով իրեն վերապահված այլ լիազորություններ,

8.17.11. Նախագահի բացակայության դեպքում նախագահի հանձնարարությամբ նրա պարտականությունները կատարում է Խորհրդի անդամներից մեկը:

Գործադիր մարմինը՝ տնօրենը

8.18. Կազմակերպության Տնօրենը ընտրվում է Ընդհանուր ժողովի կողմից՝ հինգ տարի ժամկետով:

8.19. Տնօրենի իրավասությունները ներառում են Կազմակերպության ընթացիկ գործունեության կառավարման, ինչպես նաև Կազմակերպության Խորհրդի և Ընդհանուր ժողովի գործունեությունն ապահովելուն ուղղված բոլոր հարցերը:

8.20. Կազմակերպության Տնօրենը՝

8.20.1 իր իրավասության սահմաններում առանց լիազորագրի ներկայացնում է Կազմակերպությունը,

8.20.2. ղեկավարում է Կազմակերպության աշխատակազմը, Կազմակերպության աշխատողների համար իրականացնում է գործատուի ֆունկցիաներ, այդ թվում՝ կնքում է աշխատանքային պայմանագրեր,

8.20.3. բանկերում բացում է Կազմակերպության հաշվարկային (այդ թվում՝ արտարժութային) և այլ հաշիվներ,

8.20.4. ապահովում է Կազմակերպության Ընդհանուր ժողովի, Նախագահի և Խորհրդի որոշումների կատարումը,

8.20.5. ապահովում է տարեկան աշխատանքային ծրագրի մշակումը և իրականացումը, ինչպես նաև կառավարման մարմինների և հանձնաժողովների նիստերի նախապատրաստումը,

8.20.6. ապահովում է Կազմակերպության անդամների հետ արդյունավետ հաղորդակցությունը,

8.20.7. իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, կատարման համար տալիս է պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը,

.20.8. հաստատում է կազմակերպության գործունեությունը կանոնակարգող ներքին փաստաթղթերը, այդ թվում՝ նրա առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների ներքին կարգապահական և այլ կանոնները,

8.20.9. տնօրինում և կառավարում է Կազմակերպության ցանկացած տեսակի և չափի գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները, գործարքներ է կնքում Կազմակերպության անունից,

8.20.10. իր իրավասության սահմաններում որոշումներ է կայացնում նախագահի հետ քննարկելուց, իսկ իր նախաձեռնությամբ բարձրացրած հարցերի շուրջ նաև նախագահի հետ համաձայնեցնելուց հետո,

8.20.11. կազմում է Կազմակերպության հաստիքացուցակը և տարեկան ծախսերի նախահաշիվը և ներկայացնում նախագահի հաստատմանը :

8.23. Կազմակերպության տնօրենը կրում է օրենքով նախատեսված պատասխանատվություն օրենքների, իրավական այլ ակտերի, Կազմակերպության կանոնադրության, Ընդհանուր ժողովի որոշումների կամ կնքված պայմանագրերի պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

Կազմակերպության Վերստուգիչ հանձնաժողովը (Վերստուգողը)

8.24. Կազմակերպության Վերստուգիչ հանձնաժողովը (Վերստուգողը) ընտրվում է Ընդհանուր ժողովի կողմից հինգ տարի ժամկետով: Խորհրդի անդամները, Տնօրենը և Նախագահը չեն կարող լինել Վերստուգիչ հանձնաժողովի անդամ (Վերստուգող):

8.25. Վերստուգիչ հանձնաժողովը (Վերստուգողը) իր աշխատանքներն իրականացնում է նիստերի ձևով, որոնք հրավիրվում են տարեկան առնվազն մեկ անգամ: Նիստ կարող է հրավիրվել նաև Կազմակերպության անդամների 20%-ի, Վերստուգիչ հանձնաժողովի անդամների մեկ երրորդի (Վերստուգողի), Կազմակերպության Տնօրենի կամ Խորհրդի պահանջով:

8.26. Կազմակերպության Վերստուգիչ հանձնաժողովը (Վերստուգողը) կարող է հարցեր քննարկել և որոշումներ կայացնել, եթե նիստին մասնակցում են հանձնաժողովի անդամների 2/3-ը: Հանձնաժողովի որոշումները ընդունվում են ձայների պարզ մեծամասնությամբ:

8.27. Ձայների հավասարության դեպքում հանձնաժողովի նախագահի ձայնը վճռորոշ է: Եթե վերահսկող մարմինը Վերստուգողն է, ապա նա որոշումներ է ընդունում միանձնյա:

8.28. Կազմակերպության գործունեության և գույքի օգտագործման վերաբերյալ հաշվետվությունները Ընդհանուր ժողովի հաստատմանն են ներկայացվում դրանց վերաբերյալ Վերստուգող մարմնի եզրակացության հետ միասին:

8.29. Կազմակերպության Վերստուգիչ հանձնաժողովը (Վերստուգողը) իրավասու է՝

8.29.1. տարին մեկ անգամ անցկացնել Կազմակերպության ֆինանսատնտեսական գործունեության ստուգում,

8.29.2. ծանոթանալ Կազմակերպության գործունեությանն առնչվող բոլոր փաստաթղթերին և պարտադիր քննարկման ենթակա առաջարկություններ ներկայացնել Կազմակերպության մարմիններին, որոնք պարտավոր են տասը աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել գրավոր պատասխաններ,

3.29.3. պահանջել և ստանալ Կազմակերպության գործունեության վերաբերյալ տեղեկատվություններ,

.29.4. իրականացնել սույն կանոնադրությամբ և Ժողովի որոշումներից բխող այլ լիազորություններ:

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ, ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՍԵՑՈՒՄԸ, ԼՈՒԾԱՐՈՒՄԸ, ԼՈՒԾԱՐՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ԳՈՒՅՔԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ

9.1. Կազմակերպության վերակազմակերպումը (միաձուլում, միացում, բաժանում, առանձնացում, վերակազմավորում) կատարվում է Ընդհանուր ժողովի որոշմամբ: Կազմակերպության վերակազմակերպումը դատական կարգով հնարավոր է միայն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով:

9.2. Կազմակերպությունը կարող է միաձուլվել այլ կազմակերպության (կազմակերպությունների) հետ:

9.3. Կազմակերպությունը կարող է միանալ այլ կազմակերպության հետ:

9.4. Կազմակերպությանը կարող է (են) միանալ այլ կազմակերպություն (կազմակերպություններ):

9.5. Կազմակերպությունը կարող է բաժանվել այլ կազմակերպությունների:

9.6. Կազմակերպությունից կարող է (են) առանձնանալ կազմակերպություն (կազմակերպություններ):

9.7. Կազմակերպությունը կարող է վերակազմավորվել հասարակական միավորման որևէ այլ կազմակերպական-իրավական տեսակի կամ հիմնադրամի:

9.8. Կազմակերպության վերակազմակերպման հետևանքով նրա կանոնադրության փոփոխությունները և (կամ) լրացումները կամ գործունեության դադարումը, ինչպես նաև նոր ստեղծված իրավաբանական անձը (անձինք) պետական գրանցում է (են) ստանում օրենքով սահմանված կարգով:

9.9. Կազմակերպության գործունեությունը կարող է որոշակի ժամկետով կասեցվել դատարանի որոշմամբ՝ Լիազոր մարմնի դիմումի հիման վրա՝ օրենքով սահմանված կարգով:

9.10. Կազմակերպության լուծարումը հանգեցնում է նրա գործունեության դադարմանը՝ առանց իրավունքները և պարտականություններն իրավահաջորդության կարգով այլ անձանց փոխանցվելու: Կազմակերպությունը համարվում է լուծարված, իսկ նրա գործունեությունը՝ դադարած, նրա գործունեության դադարման պետական գրանցման պահից:

9.11. Կազմակերպությունը կարող է կամավոր լուծարվել իր բարձրագույն մարմնի որոշմամբ՝ ներառյալ այն ժամկետը լրանալու կապակցությամբ, որով ստեղծվել է նա ստեղծվել է:

9.12. Կազմակերպության հարկադիր լուծարման մասին որոշում կարող է ընդունել միայն դատարանը՝ պետական լիազորված մարմնի պահանջով և միայն օրենքով սահմանված հիմքերի առկայության դեպքում:

9.13. Կազմակերպության լուծարումն իրականացվում է իրավաբանական անձանց լուծարման՝ օրենքով սահմանված կարգով և պայմաններով:

9.14. Կազմակերպությունը լուծարվելու դեպքում պարտատերերի պահանջները բավարարելուց հետո մնացած գույքն ուղղվում է Կազմակերպության կանոնադրությամբ նախատեսված նպատակներին, դրա անհնարինության դեպքում դրամական միջոցները փոխանցվում են պետական բյուջե, իսկ այլ գույքը սեփականության իրավունքով փոխանցվում է Հայաստանի Հանրապետությանը՝ ի դեմս Կառավարության, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի:

9.15. Կազմակերպության լուծարման մասին կազմակերպության բարձրագույն մարմնի որոշումը կազմակերպության այլ մարմինների ու լուծարման հանձնաժողովի՝ լուծարման գործընթացին վերաբերող որոշումները, դրանք կայացնելուց հետո տասնօրյա ժամկետում դատարան բողոքարկելու իրավունք ունի կազմակերպության ցանկացած անդամ: Այդ դեպքում դատարանը կարող է իր որոշմամբ կասեցնել

վիճարկվող որոշման կատարման ընթացքը՝ մինչև գործի դատական քննության ավարտը:

9.16. Կազմակերպության լուծարման պետական գրանցումն իրականացվում է իրավաբանական անձանց լուծարման պետական գրանցման համար օրենքով սահմանված կարգով:

65